Շուշանիկ Կուրղինյան

Հայ կնոջ երգը

Ինչո՞ւ թախիծը դեմքիդ
Ման ես գալիս դու, հայ կին .
Անլուր վիշտը միծտ կրծքիդ,
Տանջանքի հետ, անմեկին:

Գուցե ջահել օրերից
Սերդ խեղդած ոտնահար,
Որ պահել ես աշխարհից,
Փոթորկո՞ւմ է քո դադար:

Գուցե քո բիրտ ծնողի
Շահին դարձար դու ապրանք,
Եվ քեզ անգութ գնողի
Հե՞տն ես ապրում անփրկանք:

Թե՞ հանդգնար դու մեկին
Սիրել գաղտնի— երազում .
Թշվառ, ստրուկ դու, հայ կին,
Մահի գիրկն ես վազում:

Գուցե դատվա՞ծ ե<u> անպարտ
Հպվել կյանքի հատակում,
Եվ ընկածի մեղապարտ

Խաչն ես տանում աննկուն:

Դեհ, սթափվի՛ր, հարազատ,
Վանիր թախիծը դեմքիդ՝
Կռվի՛ր, բողոքի՛ր ազատ .
Դա է փրկանքը կյանքիդ:

1907 թ . 10 հուլիսի